



# ՄԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԺԱՐԱ

25 ՀՈՒՆՎԵՐԻ, 2016 թ.

№ 1 (986)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
Երևանու պատմական 50 -րդ տարի

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



## «Մեր ամենօրյա աշխարհանքով հեղապահում ենք նոր նպարակներ»

Մանկարժական համալսարանում կայացավ Խորհրդի տարեկերջյան ընդունման միստը, որը մեկնարկեց Խորհրդի նախագահի ընտրությամբ. 5 տարի ժամկետով այդ պաշտոնում բաց ընթացակարգով վերընտրվեց ՀՀ ԱՌ նախագահ Գևորգ Սահակյանը: Գ. Սահակյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար՝ պատրաստականություն հայտնելով շարունակել իր ամենօրյա աշխատանքով նպաստել բուհական կրթական համակարգի բարելավման:

«Ամենայն բրածից, թե այսօր ինչ պաշտոն ու դերակատարություն ունեմ քաղաքական դաշտում, ինձ համար սա այն միջավայրն է, որտեղ ինձ ավելի լավ ու հպարտ եմ զգում: Այսօր ինձ նախարարությունը ընթափում անմիջապես նաև կրթության կառավարմանը», - ասաց ԱՌ նախագահն և հավելեց, որ շատ շուտով կստեղծվի միջքուհական լուրջ մրցակցություն, որտեղ Մանկավարժական համալսարանի նախարարությունը մերժ առավելագույն են:

Խոսելով միջազգային համագործակցության մասին՝ Խորհրդի նախագահն ընդգծեց, որ կրթական միջազգային արենայում բուհը բավականին լավ արդյունքներ է գրանցել, սակայն այդ ամենում պետք է պահպանել ազգային գաղափարախոսությունը ու լեզուն և այդ ենթով շարունակել հետագա գործունեությունը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզայանը ներկայացրեց բուհի 2015 թվականի գործունեության հաշվետվությունը, ապա 2016 թ. բյուջեի նախագիծը, խոսեց իրականացված ծրագրերի, բուհի ձեռքբերումների և անելիքների մասին:

➤2

## ԱՄՓՈՓԵԼՈՎ ՏԱՐԻ...

Մանկավարժական համալսարանում կայացավ բուհի Գիտական խորհրդի տարեկերջյան միստը: Տախանորդական անցնելը, ներկաները մեկ րոպե լրությամբ հարգեցին խորհրդի անդամ, ակադեմիկոս Գեորգ Բրուսյանի հիշատակը՝ բարձր գնահատելով նրա ներուժը ու ազդեցությունը բուհի գիտական կյանքում:

Խորհրդի անդամները դիմումին բուհի 2015 թվականի գործունեության և ամենակարևոր ձեռնարկների մա-

սին պատմող ընդգրկուն ֆիլմ, ապա ռեկտոր Ռուբեն Միրզայանը հանդես եկավ ընթացիկ տարում համալսարանում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությամբ:

Ռեկտորը Գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց 2011-2015 թթ. դրամական նուտքերի և ելքերի դիմանիկան, 2014-2015 թթ. դրամական ելքերի բաշխվածությունը, ուսանողների և 1-ին կուրսեցիների ➤2



## «ՄԱՇԱՐՄԱ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԻՍԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Հունվարի 19-20-ը ՀՊՄՀ-ում անցկացվեցին «Մահարժան» ծրագրի համակարգող համինումներ, որի նախատակն էր ներկայացնել 2015 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները, հաջորդ տարվա անելիքները, միաժամանակ բնարկել ծրագրով նախատեսված առաջիկա վերապատրաստման բանաձեռ, կրթության ոլորտի մասնագետների ասոցիացիայի հիմնադրման և գործողությունների իրականացման խմբիները, ինչպես նաև ծրագրի արդյունքների տարածումը և կառավարումը:

Նշենք, որ Մահարժան ծրագրի ղեկավարներն ու բոլոր ներգրավվածները մեկ հիմնական նպատակ ունեն՝ բարելավել բարձրագույն կրթության կառավարում՝ պատրաստելով ոլորտի առաջնորդներ, ովքեր գորու կլինեն իրագործել բարեփոխումներ:

Մագիստրոսական կրթական ծրագրի մշակումն ու իրականացումը ենթադրում է դասավանդման և ուսումնառության նորարար մոտեցումների, ինչպես նաև կրթության կառավարման



նոր մեթոդների գործարկում: Բոլոնիայի պահանջների համաձայն ուսումնական պլանի և որակի ապահովման չափանիշներին համահումը ծրագրի մշակումը կնպաստի որակյալ գործընթաց իրականացնելուն և համապատասխան արդյունք ու շրջանավարտներ ունենալուն:

Դիմելով «Մահարժան» ծրագրի համակարգող խորհրդի նիստի մասնակիցներին՝ ծրագրով գրավող աշխատախմբի անդամ, ՀՊՄՀ վարչության պետ Մկրտիչ Ավագյանը խոսեց ծրագրի շրջանավարտների մասին, որից ելելով էլ այն ➤2













